«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2011 թվականի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն համալսարանի կանոնադրության 23-րդ կետի և խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի թիվ 1 նիստի արձանագրության, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հիմք ընդունելով ռեկտորի ընտրության նպատակով խորհրդում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի պաշտոնում համարել ընտրված **Կորյուն Լուկաշի Աթոյանին**:
2. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդի նախագահ **Հովիկ Աբրահամյանին՝**

1) խորհրդի որոշումը և ռեկտորի ընտրության արդյունքները (հաշվիչ հանձնաժողովի թիվ 1 նիստի արձանագրության երկրորդ բնօրինակը) մեկօրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու համար,

2) միջնորդել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր **Կորյուն Լուկաշի Աթոյանի** հետ հինգ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

Խորհրդի նախագահ **Հովիկ Աբրահամյան**

Խորհրդի քարտուղար **Նաիրա Դարբինյան**

26 ապրիլի 2011 թ.

ք. Երևան